

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՐԿՐԱՊԱՀ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ Կոտայքի մարզպետ Արամ Հարությունյանն ընդունել է Երկրապահ կամավորականների միության Կոտայքի մարզի խորհրդի ներկայացուցիչներին:

Հանդիպման շրջանակներում Կոտայքի մարզպետը և մարզի երկրապահները քննարկել են հետագա համագործակցության տարրեր ուղղություններ, ինչպես նաև անդրադարձ կատարել համատեղ միջոցառումների կազմակերպմանը և մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության աշխատանքներին նպաստող ծրագրերի իրականացմանը վերաբերող հարցեր:

ԵԿՄ Կոտայքի մարզի խորհրդի նախագահ Արել Հարությունյանը հանդիպման ընթացքում տեղեկություններ է ներկայացրել մարզային կառույցի և տարածքային բաժանմունքների ընթացիկ աշխատանքների և առաջիկա նախաձեռնությունների վերաբերյալ:

Հարկ է նշել նաև, որ հանդիպման ընթացքում Կոտայքի մարզպետը հայտնել է ԵԿՄ մարզային կառույցի աշխատանքներին աջակցելու պատրաստակամություն և ձեռք են բերվել մի շարք պայմանավորվածություններ հետագա համագործակցության շրջանակների, ինչպես նաև առաջիկայում նախատեսվող պարբերական հանդիպումներում կոնկրետ առաջարկությունների շուրջ համապատասխան քննարկումներ կազմակերպելու վերաբերյալ:

25.06.2014 թ.